

ա) Ենթակայի եւ ստորագրողի համաձայնութիւնը

1. Երբ բաղում տեսակ անունները հանդէս են դալիս անուն բայի դերով եւ լինում են զանազան դէմքերով, բայը պէտք է դնել պատուականդոյն դէմքով: Պատուականանդոյն է համարուում առաջինը, քան երկրորդը, երկրորդը՝ քան երրորդը՝ նայած խօսքի իմաստին ու կապակցութեանը. օրինակ՝ ես եւ որդիդ ելանմեմ առ նոսա. իսկ դու եւ Պետրոսն սպասեցէք:

2. Անուն բային (ենթական) եւ խնդիրը միշտ առնելով են իրենց վերաբերելին, թէ տարբեր վերաբերելիներ⁸⁰:

ա) Մերթ առնելու են իրենց վերաբերելին. օր. ԾԱՆՐ է քարն, ԴԱՌՆ է օշինդրն:

բ) Մերթ առնելու են զանազան (տարբեր) վերաբերելիներ. օրինակ՝ հուրն ՄԱՇԷ ԶՓԱՅՏ եւ նախանձն (ՄԱՇԷ) ԶՍԻՐՏ:

Այստեղ պէտք է հասկանալ ուղիղ խնդիրը:

3. Երբ բայերը զիմաւոր են, անհրաժեշտ է, որ ենթական (անուն բայի կամ տէր բայի) լինի ուղղական հոլովով եւ համաձայնի բայի հետ դէմքով ու թուով, իսկ երբ բայը աներեւոյթ է կամ ընդունելութիւն է, անհրաժեշտ է աշխարհի համաձայնեցումը, քանի որ այսպիսի դէպքերում ենթական (անուն բայի) կարող է դրուել նաեւ սեռական հոլովով, ուստի եւ դէմքով ու թուով համաձայնունելու կարիքը չի զգում: Օրինակ՝ Եւ նոցա տեսնալ զայս, զի վարդապետաց խօսիլն առաւել գործունեայ էր, լռեցին:

Այլ օրինակ. «Մտանելն Պետրոսի ի տաճարն՝ եղեւ արգելանաւոր: Այս նախադասութեան մէջ մտանել բային ենթական սեռական հոլով է (Պետրոսի). մտանել՝ աներեւոյթ բայ է:

4. Ենթական (անունը կամ տէր բային) կարող է գործածուել նաեւ ազատ շարա-

դասութեամբ՝ նախադաս, միջնորդաբար եւ այլն. օրինակներ.

ա) Նախադաս.

Պետրոս էառ զյաղթանակն:

բ) Միջնորդաբար.

Պետրոս, զորմէ ոչ յարձէր, էառ զյաղթանակն:

գ) Ետադաս.

Ամբաստանէր զտեառնէ իւրմէ ծառան չար:

Երկրորդ օրինակը, արդի հասկացողութեամբ, բարդ ստորադասական նախադասութիւն է, ուր երկրորդական միջադաս է: Պարզ երեւում է, որ քերականը միջնորդաբար է համարում այն դէպքում, երբ երկրորդական նախադասութիւնը, ընկնելով զլիսաւոր անդամների միջեւ, ընդմիջում, անջատում է ենթական ստորոգեալից:

5. Երբ ածականը հանդէս է դալիս անուն (ենթական) դերով եւ միայնակ կատարում է ենթականի պաշտօն, գոյականի առկայութիւնը այլեւս կարեւոր չէ, այսինքն՝ գոյականը կարող է զեղչուել. օրինակ՝ Արդարս փրծանի յորսողաց, որ նշանակում է՝ Արդար այրն փրծանի յորսողաց⁸¹:

Քանի որ տէր բայի (կամ անուն) դերով կարող են հանդէս գալ նաեւ խօսքի այլ մասեր, որոնք անուանանում են, ինչպէս ասում է հեղինակը, ապա այդ բոլոր բառերը՝ բայի հետ համաձայնելու են նոյն կանոններով, ինչ կանոններով համաձայնում էր անունը: խօսքի այլ մասերի անուն դերով հանդէս գալու մասին Սերաստացին գրում է. «Հինգերորդ գիտելի է, զի համաձայնութիւնս այս՝ զորմէ խօսիմք, լինիլ բայի ընդ անունն, ոչ միայն իմանի զանուննէ, որ գէութիւնս իրաց նշանակէ, այլ նաեւ զայլոց ոմանց մասանց բանին, որք կարեն ան-

80. Ի՞նչ բան է վերաբերելին. վերաբերելի ասելով քերականը հասկանում է ստորոգելիական վերագիրը բաղադրեալ ստորոգեալների դէպքում:

81. Մ. ՍԵՐԱՍՏԱՅԻ, նոյն տեղում, էջ 375:

ուանանալ եւ կամ փոխանակ անուն լինիլ՝ ստորակացուցանիլ անուն բայի ուրուք: Վասն որոյ թէ դերանուն իցէ, թէ ընդունելութիւն, եւ թէ աներեւոյթ, կարէ դու անուն բայի. եւ բայն պարտի ունիլ ընդ նմին զհամաձայնութիւն թուով եւ դիմաւ. որդոն՝ Հայր քո խրատեաց զքեզ, եւ դու ոչ զգաստացար. ստահակելիլ յայտնեցաւ, եւ ստահակողդ ոչ պատկառեցար: Գրեցեալս հասկանի, եւ գրելին ստորիմանի: Ահա ի սմին բանի այնքան անունն, որքան դերանունն, ընդունելութիւնն եւ աներեւոյթ բայն՝ եղեն անուն բայի»⁸²:

բ) Ածականի եւ գոյականի համաձայնութիւն

1. Ածականը պէտք է համաձայնի իր գոյականի հետ թուով եւ հոլովով: «Պիտոյ է, - գրում է Սերաստացին, - զի յորում թուով կամ հոլովով իցէ գոյական անուն, ի նմին թուով եւ հոլովով իցէ ածականն. այսինքն՝ եթէ եզական իցէ գոյականն՝ եղիցի եզական եւ ածականն. եւ եթէ հայցական իցէ գոյականն կամ բացառական եւ կամ այլ ինչ հոլով, լինիցի նմանապէս եւ ածականն:

Օրինակ՝ կալարուք մեզ զաղուեսունս փոքունս զապականիչս այգեաց:

Այս նախադասութեան մէջ զաղուեսունս գոյական անուն է, դրուած յոգնաստի թուով եւ հոլովով: Փոքունս կի թուով եւ հայցական հոլով: Փոքունս եւ զապականիչս ածական անուններ են, որ եւ զապականիչս ածական անուններ թուով եւ հայցական հոլով:

2. Ածական անունները կարող են գործածուել եւ առաջադաս եւ ետադաս:

ա) Առաջադաս. - համեստարան լեզու, սրբոյն Բեռնարդոսի, տենչալի բարբառ, ունկնդրողաց մարդկանց, քաղցրախորժ կոկորդ:

բ) Ետադաս. - մարդ բարի, այր արդար:

3. Ետադաս գործածուող ածական անունները պէտք է համաձայնեն գոյականի

նի հետ թուով ու հոլովով. օրինակ՝ Առն արդարոյ ոչ պակասին բարիք: Վասն որոյ զիմեա առ այր արդար, խնդրեա զայր արդար: Մի հեռանար յառնէ արդարոյ: Տուր զխրատ արանց արդարոյ: Երթ ի ճանապարհ արամբք արդարօք:

4. Նախադաս գործածուող ածականները մշտապէս եւ ամէն դէպքում չէ որ հարկաւորութիւն ունին համաձայնուելու իրենց գոյականների հետ թուով եւ հոլովով: Որոշ դէպքերում ածականները դրուում են եզակի թուով եւ ուղղական հոլովով, իսկ գոյականները՝ յոգնակի թուով եւ որեւէ այլ հոլովով: Օրինակ՝ Վասն բարեպաշտ թաղաւորաց եւ աստուածասէր իշխանաց, զօրավարաց եւ զօրաց նոցին զտէր աղաչեսցուք: Բարեպաշտ եւ աստուածասէր ածականները դրուել են եզակի թուով եւ ուղղական հոլովով, մինչդեռ քաղաւորաց, իշխանաց, զօրավարաց գոյականները գործածուել են յոգնակի թուով եւ սեռական հոլովով⁸³:

Հենց այս առիթով էլ Արքահայրը խիստ զայրոյթով ու ցասումնալից բողոքում է զասական հայերէնի աւանդութեան ուղու դէմ՝ զնացող օտարների կամ օտարամոլ Հայերի դէմ: Նա գրում է. «Եւ եթէ ոք բռնաբարեալ զսովորութիւն լեզուին յամենայն ուրեք կամ իցի ներդործութեամբ համաձայնեցուցանել զնախադասեալ ածականն՝ գոյականի իւրում, թուով եւ հոլովիւ, ի բազում տեղիս մերժէ զբաղցրութիւն արտաբերմանց բառից եւ անհարթ առնէ զշարադրութիւնս. մանաւանդ մինչ զփուարհոլովից ածականաց հանդիպի»⁸⁴:

Ելնելով սրանից՝ աւելի լաւ ու զեղեցիկ կը լինի, եթէ գրենք. «Յամենայն ներդործեմք իմմէ փրկեցեր զիս» քան թէ՝ «Յամենայն ներդործեմք իմմէ փրկեցեր զիս» կամ՝ աւելի լաւ է գրել. «Մի ամենայն հոգւոյ հաւատայք» եւ ոչ թէ՝ «Մի

82. Մ. ՍԵՐԱՍՏԱՅԻ, նոյն տեղում, էջ 373:

83. Մ. ՍԵՐԱՍՏԱՅԻ, նոյն տեղում, էջ 376:

84. Մ. ՍԵՐԱՍՏԱՅԻ, նոյն տեղում, էջ 376-377:

ամենայնի հոգևոյ հաւատարմութիւնը: Այլ օրինակներ.

ա) Պատեաց սուրբ կտաւօք եւ ոչ թէ՛ պատեաց սրբովք կտաւօք:

բ) Մաքուր ձեռք եւ ամբիժ սրտիւք, եւ ոչ թէ՛ մաքրովք ձեռք եւ ամբիժ սրտիւք:

Եւ իրօք, որքան անբարեհաճիւն, դժուար առողջանելի, տգեղ եւ բռնադրօսիկ են հնչում օտար լեզուի ազդեցութեամբ ստեղծուած արհեստական այդ ձեւերը:

Սերաստացին նկատում է, որ այս դէպքում եղակի թուով եւ ուղղական հոլովով գործածուած ածականները գոյականների գործածմամբ ու իմաստով նոյնպէս ըմբռնուում են յոգնակի թուով եւ սեռական հոլովով⁸⁵:

գ) Երբ խօսքի որեւէ մաս մտնում է գոյականի եւ ածականի միջեւ, այդ դէպքում թեկուղ նախադաս էլ լինի, ածականը համաձայնելու է իր գոյականի հետ թուով եւ հոլովով. օրինակ՝ երկնայնով զմայլէիր քաղցրութեամբ:

Զմայլէիր բայը գործածուել է միջադաս ձեւով, այսինքն՝ մտել է գոյականի եւ որոշիչի միջեւ. դրա համար էլ որոշիչը (երկնայնով) հոլովուել է: Զի կարելի չէր՝ որ երկնային զմայլէիր քաղցրութեամբ:

Իսկ եթէ զմայլէիր բայը չընկնէր գոյականի եւ որոշիչի միջեւ, կարելի էր առնել՝ Որ երկնային քաղցրութեամբ զմայլէիր:

5. Երբ ածականն ու գոյականը (որոշիչն ու գոյականը) նախդիրով են, պէ՛տք է հոլովուեն. կամ՝ երկուսն էլ պէ՛տք է զնել նախդիրով: - Ոչ, պատասխանում է քերականը, - այլ միայն առաջադասուածն է նախդիր առնելու. օրինակ՝ փրկեալիս, տէր, ի մարդոյ չարէ, կամ՝ ի չարաբարոյից արանց փրկեալիս:

6. Երբ ածականը նախադաս է գործածուում եւ ունի դիմորոշ տառ (յօդ) գոյականի հետ պէ՛տք է համաձայնութիւն թրուով եւ հոլովով. օրինակ՝ ի սրբոյն Պե-

տրոսէ ուսաք եւ ոչ թէ՛ ի սուրբն Պետրոսէ ուսաք: Մի այլ օրինակ. «Տուր սրբոյն Պետրոսի եւ Պողոսի եւ ոչ թէ՛ Տուր սուրբն Պետրոսի եւ Պողոսի»:

7. Երբ երկու եղակի գոյական անուններ չաղկապուած լինեն, նրանց ածականը (որոշիչը) պէ՛տք է դրուի յոգնակի թուով. օրինակ՝ Պետրոս եւ Պողոս ընթերցեալքն (կարգացող Պետրոսն ու Պողոսը):

8. Երբ մի գոյականի հետ գործածուեն երկու ածական (որոշիչներ) անսլայման երկուսն էլ պէ՛տք է կամ համաձայնուեն, կամ չհամաձայնուեն. օրինակ՝ Արդարոց եւ սրբոց արանց պատահեցայ. կամ՝ արդար եւ սուրբ արանց պատահեցայ: Զի կարելի ասել կամ զրել՝ արդարոց եւ սուրբ արանց պատահեցայ:

9. ա) Երբ երկու չաղկապուած ածական (որոշիչ) են գործածուում ու նախադաս են, պէ՛տք է երկուսն էլ նախդիր ընդունեն. օրինակ՝ Զսուրբ եւ զանմեղ պատանին քարչեն ի դատաստան: բ) Իսկ երբ ետադաս են գործածուում, այդ դէպքում նախդիր չեն ընդունի, քանի որ գոյականի ընդունած նախդիրը այդ դերը իր վրայ է վերցնում. օրինակ՝ Զպատանին սուրբ եւ անմեղ քարչեն ի դատաստան:

10. ա) Երբ ստացական դերանունները ետադաս են գործածուում, միշտ համաձայնում են թուով եւ հոլովով: Օրինակ՝ Որդւոյ մերում եւ հօր քում մատոյ զողջոյն սիրոյ:

բ) Սոյն, դոյն, նոյն ցուցական դերանունները, որ գրեթէ միշտ նախադաս են գործածուում, համաձայնում են թրուով ու զէմքով. օրինակ՝ ի նոյնոյ զանկուածոյ կազմեաց:

գ) Այս, այդ, այն ցուցականները ետադաս գործածուելիս համաձայնում են ոչ միայն թուով ու հոլովով, այլեւ նախդիր ունենալու դէպքում էլ են համա-

85. Մ. ՍԵՐԱՍՏԱՅԻ, նոյն տեղում, էջ 376-377:

ձայնուում: Օրինակ՝ Զայս զայս ածիք կապեալ առ իս:

դ) Նոյն ցուցականները նախադաս գործածուելու դէպքում համաձայնում են միայն թուով. օրինակ՝ Յայդմանէ որդեայթէ զգոյշ լեր. կամ՝ ի բաց կացէք յարանցդ յայդցանէ:

զ) Դերանուն եւ նախդիրացի (յարաբերեալի) համաձայնութիւնը

1. Յարաբերական դերանունները համաձայնում են անուան հետ հոլովով. այսինքն՝ ինչ հոլովով որ դրուած է անունը, նոյն հոլովով էլ դրուում է յարաբերական դերանունը. «Զոր առաջադրեն քեզ, ուսիր եւ յորոց խորհեցուցաւ նեն, զգուշացիր, - դրում է քերականը, - ահա ի ամին բանի գործութեամբ վերականգնեալ յայնց»: Յարաբերականները վերականգնեալ զէմքով կը ստացուի այսպէս. «Զոր առաջադրեն քեզ, զայն ուսիր եւ յորոց խորհեցուցանեն, յայնց զգուշացիր»:

Այս բաժնում Սերաստացին հետաքրքիր հարց է առաջ քաշում. ի՞նչպէս տարբերել յարաբերական ու հարցական դերանունները, չաղկապը եւ պարզ դերանունը:

«Ո՞րպէս զանազանին յիշեցայ յարաբերական որն, հարցականն եւ չաղկապը եւ պարզ դերանունը», - հարցնում է քերականը: Այս հարցին տալիս է հետեւեալ բարբերելով զանուան զանազանի յայնց: Բարբերելով զանուան զանազան հարցման հարցական որն եղանակաւ հարցման պարոյկանչանաւ: Պարզ դերանունն որն պարոյկանչանաւ, իսկ չաղկապ որն միալինելով ածական, իսկ չաղկապ որն միալորելով զբանս՝ զանազանի ի բանից»: Այսպիսի բացատրութիւն տալուց յետոյ, չաղկապը պէ՛տք է բերեն համապատասխան ինքնուրոյն նախադասութիւններ և ցոյց տան, որ իւրացրել են դրանք:

2. Այս կերպ շարադրում է նաեւ, թէ խօսքի ուրիշ ինչ մասեր կարող են յարաբերել նախընթացին եւ նշում է որ սա,

դա, նա ցուցական դերանունները եւ տեղ ցոյց տուող ուր, անդ մակբայները եւս կարող են յարաբերել իրենց նախընթացին:

դ) Հարցման համաձայնութիւնն իր պատասխանին հետ

Սերաստացին ճիշտ է նկատել, որ խօսքի շարադասութեան գործում՝ մեծ է հարցման համաձայնութիւնը իր պատասխանի հետ: Այս առթիւ նա գրում է. «Բաւական էր եթէ հարցումն եւ պատասխանին իցէին միայն զբառից. բայց մինչ սովորք են լինիլ եւ զբանից, պիտոյ է, զի պատասխանին համաձայնիցի հարցմանն նաեւ յարմարութեամբ իրին»: Բանաւոր եւ դրաւոր խօսքի մէջ յաճախ հարցն ու պատասխանը լինում են երկաւառ շուռնչ նախադասութիւններով եւ իրենց բնոյթով ու շարադասութեամբ այդ նախադասութիւններում պէ՛տք է միմեանց հետ համաձայնեցուեն, որպէսզի խօսքի աղաւաղում եւ չիօթ չառաջանայ: Ճիշտ է, սա վերաբերում է խօսքի կապակցութեանը: Կանոնաւոր խօսք կառուցելու համար մարդիկ պէ՛տք է իմանան ոչ միայն բառերը, նախադասութիւնները, այլեւ պարբերութիւններն ու ծաւալուն հարց-պատասխան խօսքերը իրար հետ ճիշտ կապակցել, այլապէս խօսքը կը կորցնի իր հաղորդակցման հասարակական դերն ու նշանակութիւնը:

Սերաստացին բերում է այսպիսի օրինակներ.

ա) Ո՞վ է որ խօսի: - Պետրոսն:

բ) Ո՞րպիսի ոք է: - Հանճարեղ եւ իմաստուն:

գ) Ուստի՞ եկեալ է: - Ի Պաղեստինոյ:

դ) Ո՞ւր է գնալոց: - Յեւդոկիա:

Այս օրինակներից յետոյ քերականը բացատրում է. «Ահա ի յայտնիլ բանս ոչ միայն հոլովին, այլեւ յարմարութեամբ իրին համաձայնի պատասխանին ընդ հարցման: Զի հարցմանն՝ Ո՞ է որ խօսի,

եթէ պատասխանիցիւր հանձնարեղ եւ իմաստուն, ոչ յարմարիւր ըստ իրին, թէ պէտ համաձայնեցիւր հոլովիւ. քանզի հանձնարեղ եւ իմաստունն գոլով ածականը՝ լինին պատասխանի հարցմանս, որպիսի եւ Պետրոս գոլով գոյական, լինի պատասխանի հարցմանս ո՞: Եւ եւս հարցման, որ եղեւ զտեղոյ, պատասխանեցաւ ի ձեռն տեղոյ, զի հարցմանս՝ ուստի՞ եկեալ է, պատասխանեցաւ ի Պաղեստինոյ: Որում թէ պատասխանեցիւր ի վաղուց հետէ, թէպէտ համաձայնեցիւր հոլովիւ, բայց ոչ յարմարութեամբ իրին, զի ի վաղուց հետէն յայնժամ միայն կարէ պատասխանի՝ յորժամ հարցանիցի, ե՞րբ եկեալ է»:

Ինչպէս նկատում ենք, Սերաստացին ձիւտ է դիտում, որ հարց ու պատասխան նախադասութիւնների բառերը ոչ միայն հոլովով պէտք է համաձայնուեն իրար, այլեւ հարցական նախադասութեան իմաստին համապատասխան՝ պատասխան նախադասութիւն պէտք է կադմուի, այսինքն՝ հարցական ու պատասխան նախադասութիւնները պէտք է իրար հետ համաձայնեցուեն հոլովով, խոնարհամբ եւ իմաստով:

Սերաստացին անում է մի նուրբ դիտողութիւն եւս. նա հարցնում է՝ հա՞րկ կայ, որ հարցական նախադասութեան բայերը կրկնուեն պատասխան հանդիսացող նախադասութեան մէջ եւ պատասխանում է, որ կայ, սակայն այդ բայերը հանգէս են դալիս ոչ թէ առկայ ձեւով, այլ զօրութեամբ, այսինքն՝ զեղչուած են, բայց իմաստից հասկացուում են ու կարող են վերականգնուել: Հակառակ դէպքում խօսքը կուռ ու միասնական զեղեցիկ ու նպատակաւոր չէր լինի, այլ անտեղի կրկնութիւններից կը ճապաղէր ու տեղի կը լինէր: Օրինակ՝ Առ ո՞ գիմես: — Առ Քրիստոս: Պէտք է հասկանալ, որ պատասխան նախադասութիւնը նշանակում է՝ Առ Քրիստոս գիմես: Կամ՝ Յուսմէ՞ առեր զչնորհ գայդ: «— Ի Քրիստոսէ, որ նշանակում է՝ Ի Քրիստոսէ առի զչնորհ գայս»:

6. — Շարադրութիւն

Շարադրութեան մասը Սերաստացու մօտ դրուած է «Յաղագս կարգաւորման մասանց բանի» ենթագլխում: Այս բաժնում խօսում է այն մասին, թէ նախադասութեան անդամները (ըստ քերականի՝ մասանց բանիները) ինչ յաջորդականութեամբ պէտք է շարադասուեն, որ կանոնաւոր խօսք ստացուի: Սերաստացին, հետեւելով նախնիներին, առաջարկում է նախ դնել անուն բային (ենթական), յետոյ նրա ածականը (որոշիչը), ի հարկէ, եթէ անհրաժեշտ է, ապա ածականի խնդիրը, նախադրութիւնը, դարձեալ, եթէ անհրաժեշտ է, յետոյ նախադրութեան խնդիրը, նրա ածականը, մակբայը, բայը, բայի խնդիրը եւ նրա ածականը: Իւրաքանչիւր անուան մօտ, համապատասխան տեղում դրուում է յատկացուցիչը եթէ անհրաժեշտ է: Իրեւ օրինակ կանոնաւոր շարադասութեան՝ բերում է հետեւեալ նախադասութիւնը:

«Վարդապետը եկեղեցւոյ փարթամք իմաստութեամբ զկնի առաքելոց սրբոց յոյժ պարզաբար բացայայտեցին մեզ ըզբանս հաւատոյ զուղիղս»: Քերականը նկատում է, որ մի պարբերութեան մէջ միշտ չէ որ անհրաժեշտ է լինում դնել նախադասութեան այդքան անդամներ (ըստ քերականի՝ խօսքի մասեր), այդ բանը պէտք է անել ըստ պահանջի⁸⁶:

Ենթելով կենդանի լեզուի իրողութիւններից՝ քերականը նրբորէն զուշացնում է, որ շարադասութեան նշուած կարգը քարացած ու պարտադիր չպէտք է դարձնել լեզուի համար: Նա կարծում է, որ մարդիկ, պահպանելով ընդհանուր սկզբունքը, միանգամայն ազատ են բառերի դասաւորութեան եւ բառաքանակի ընտրութեան հարցերում՝ միշտ ելնելով պահանջից ու նպատակից: Ըստ Սերաստացու, բառերը պէտք է դործ ածել ոչ թէ բախտով, այլ ըստ խօսքի պահանջի: Քերականն ասում է, որ լինում են

86. Մ. ՍԵՐԱՍՏԱՑԻ, նոյն տեղում, էջ 448-449:

դէպքեր, երբ խօսողը կամ գրողը գործ են ածում միայն անուն բային եւ բայը, մէկ այլ դէպքում՝ նախադասութեան գլխաւոր անդամների հետ նաեւ լրացումները եւ այլն:

ա) Հոլովառութիւն կամ կառավարութիւն⁸⁷

«Յաղագս հոլովառութեանց մասանց բանի» (գլուխ վեցերորդ, էջ 388): Քերականն այսպէս է բնորոշում հոլովառութեան էութիւնը. «Նախ գիտելի է, զի թեան էութիւնը. «Նախ գիտելի է, զի հոլովառութեան մասունք բանին ի շարայաբիւն իւրեանց պահանջեն զհոլովս յարմարեցեալս ինքեանց, եւ այսպիսիք են մարեցեալս ինքեանց, եւ այսպիսիք են անուանք, ածականք եւ նախադրութիւնք»: անուանք, ածականք եւ նախադրութիւնք էապէս այս բնորոշումը չի տարբերուում էապէս այս բնորոշումը չի տարբերուում յետագայ շրջանի քերականների տուած բնորոշումներից: Այսպիսով, ըստ քերականի առանձին խօսքի մասեր (այսինքն՝ կանի առանձին խօսքի մասեր) կապակնախադասութեան անդամներ) կապակնութեան մէջ ընդունում են իրենց լրացեալի թելադրած հոլովը:

Սերաստացին երկու դուգահեռ եզր է դործածում՝ «հոլովառութիւն» եւ «կառավարութիւն»: «Վասն կառավարութեանց եւ կամ հոլովառութեանց բայից նախ գիտելի է...»⁸⁸:

Յետագայ քերականները պահպանում են Սերաստացու հոլովառութիւն եզրը, եւ Սերաստացու հոլովառութիւն եզրը փոխարինակ «կառավարութիւն» եզրով: Այսնում են «խնդրառութիւն» եզրով: Այսպիսով չուրջ երկուսուկէս դար է, որ այդ պիտով չուրջ երկուսուկէս դար է, որ այդ պատմութեան մէջ եւ իր գոյութիւնը շապատմութեան մէջ եւ իր գոյութիւնը է, բունակում է առ այսօր: Մեզ թուում է, որ միայն «հոլովառութիւն» եզրը բաւարար է շարահիւսական այդ իրողութիւնը կան է շարահիւսական այդ իրողութիւնը արտայայտելու համար եւ աւելի ճշտորէն է համապատասխանում իր բովանդակութեանը, ուստի, յատկապէս գալորցական թեանը, ուստի, յատկապէս գալորցական թեանը, ուստի, յատկապէս գալորցական թեանը:

Քերականը հերթականութեամբ եւ օրինակներով, ցոյց է տալիս, որ բայերը,

ընդունելութիւնը, անունները, ածականները եւ նախադրութիւնները ինչ հոլովով լրացումներ են պահանջում: Այսպէս, օրինակ՝ ներգործական բայերի հետ գործածուում են հայցական հոլովով սեռի խնդիրներ, կրաւորական բայերի հետ՝ բացառական հոլովով նոյնպէս սեռի խնդիրներ:

«Վասն կառավարութեանց եւ կամ հոլովառութեանց բայից, — գրում է քերականը, — նախ գիտելի է, զի ամենայն բայ ներգործական է՝ վասն ներգործականութեան իւրոյ առնու զհոլովն հայցական, եւ այն կոչի խնդիր սեռի, զի առարկեցեալն ներգործութեան որ է կրօն՝ լինի խնդիր ի հայցական հոլովով, որդոն, Պետրոս սիրէր զՊօղոս: Նմանապէս եւ ամենայն բայ կրաւորական վասն կրաւորականութեան իւրոյ առնու զհոլովն բացառական եւ այն եւս կոչի խնդիր սեռի, զի մինչ ամենայն կրօն՝ յումեքէ առնող է կրէ, խնդիր սեռի կրաւորականաց բայից լինի բացառականի հոլովով, որդոն, Պօղոս սիրէր ի Պետրոսէ»⁸⁹:

Քերականը նշում է, որ առանձին դէպքերում ներգործական բայերը կարող են առնել նաեւ բնութեան խնդիր՝ իրենց նշանակութեան զօրութեամբ: Օրինակ, եթէ ներգործական բայը տալու, ընձեռնելու նշանակութիւն, իմաստ ունի, պահանջում է տրական հոլովով խնդիր (ընձեռնեմ քեզ զկանոն քերականութեան): Եթէ բայն ունի արձակելու, անջատելու իմաստ, պահանջում է բացառական հոլովով խնդիր (որպէսզի արձակիցեմ ըզքեզ ի կապանաց տղիտութեան եւ միանգամայն անջատիցեմ ի կացութեանց մոլեկանաց եւ զերծուցանիցեմ ի վտանգից հոգւոյ եւ մարմնոյ»⁹⁰:

«Տէր, հան ի բանտէ զանձն իմ» նախա-

87. Կառավարութիւն եզրը առաջին անգամ գործածել է Կղեմէս Գաղանոսը, ուստի պէտք է ընդունել, որ Սերաստացին այս եզրը վերցրել է նրանից:

88. Մ. ՍԵՐԱՍՏԱՑԻ, նոյն տեղում, էջ 394:

89. Մ. ՍԵՐԱՍՏԱՑԻ, նոյն տեղում, էջ 394:

90. Մ. ՍԵՐԱՍՏԱՑԻ, նոյն տեղում:

դասութեան մէջ, ըստ քերականի, ներգործական բայը պահանջել է բնութեան խնդիր:

Մի յօդուածի սահմաններում հնարաւոր է մանրամասնօրէն անդրադառնալ հոլովառութեան ենթակայ բոլոր լրացեալներին ու լրացումներին: Այսօրին էլ բաւական է ընդհանուր դադարաւոր տալու այն մասին, որ Սեբաստացին այս իրողութիւնն էլ ճիշտ է ըմբռնել եւ յետագայ քերականներին հիմք է տուել նոր որոնումներ կատարելու, ելնելով լեզուի իրական վիճակից՝ անել շտկումներ, մըտցնել ճշգրտումներ եւ այլն:

Ե.

ՍԵԲԱՍՏԱՅՈՒ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԵԹՈՏԱԿԱՆ ԱՐԺԱՆԻՔՆԵՐԸ

Կարելի է ուղղամտօրէն ասել, որ մեթոտական-մանկավարժական տեսակէտից եւս՝ Միթար Սեբաստացու քերականութիւնը մի քայլ առաջ է դնացել իր նախորդների կազմած քերականական բոլոր աշխատութիւններից:

Անցեալում գրչութեան արուեստի մասին բաւական թուով ուղեցոյցներ են գրուել, որոնք վերաբերուել են ուղղագրութեանը, վայելչագրութեանը, ոճերին ու կէտագրական նշանների կիրառութեանը: Այս ամէնը, սակայն, ուղղագրական նշանակութիւն են ունեցել: Այս տեսակէտից բաւական հետաքրքիր է Սեբաստացու գրքում եղած մեթոտական մասը: Սեբաստացին տալիս է մեթոտական խորհուրդներ: Բերենք երկու օրինակ:

«Երբորդ գիտելի է, զի առ ի համարմբոնել զմի պարբերութիւն բանի՝ պիտոյ է դնել եւ իմանալ նախ՝ թէ ո՛ր եւ կամ ո՛րն իցէ անուն բային, բայն եւ խնդիր նորին. թէ ներգործութեամբ իցեն եւ դեալք, եւ թէ զօրութեամբ: Ապա պիտոյանայ որոնել զածականսն, եթէ իցեն եւ ճանաչել արդեօք որո՞ց գոյականաց իցեն ածականք, զի բազմիցս ածականին տարակացք ի գոյականաց իւրեանց դնին: Ա-

պա հարկաւոր է քննել զյարարերական դերանունն, եւ տեսանել թէ զո՛ր յարարել է. նախ ճանաչել զդերանունն, որոց արդեօք փոխանակ եղեալք իցեն: Եւ, վերջապէս, զանագանել զյատկացուցիչսն ի խնդրոց եւ դարակել՝ թէ ո՛ր իցեն յատկացուցիչք. եւ այսպէս զայլոց մասանց հետադոտել, որոց դնեմք առաջին օրինակ դրանս դայս»: Դիտաւորեալ կերպով հատուածն ամբողջութեամբ մէջբերեցինք, որպէսզի ցոյց տանք Սեբաստացու մեթոտական-մանկավարժական հայեացքներն ու մօտեցումը ուսուցման դրծին: Ինչպէս նկատում ենք, Սեբաստացին՝ նիւթը բացատրելուց եւ համապատասխան օրինակներով ըմբռնելի դարձնելուց յետոյ՝ ցանկանում է վերլուծութեան միջոցով ստուգել եւ ամրապնդել սովորողների ձեռք բերած գիտելիքները:

Բաւական է, երբ աշակերտները կարողանում են առանձին-առանձին ճանաչել ու ասել, թէ տուեալ բառը ի՞նչ խօսքի մաս է կամ նախադասութեան ի՞նչ անդամ է, այլ նրանք գրաւոր առաջադրութեամբ՝ պէտք է կարողանան ճանաչել իւրաքանչիւր բառը, ասել նրա պաշտօնը, միւս բառերի հետ ունեցած քերականական կապը եւ այլն: Այսպէս՝ նրանք պէտք է ասեն, թէ ո՞ր բառն է հանդէս եկել որպէս անուն բայի (ենթակայ), բայ (ստորոգեալ), ո՞ր բառերն են բայի խնդիրները, առկա՞ են նախադասութեան կազմում, թէ զեղչուած են, ո՞ր բառերն են ածականի պաշտօն վարում (որոշիչ), ո՞ր գոյականների վրայ են դրուած, յարաբերական դերանունը ո՞ր յարաբերակին է վերաբերում, ճանաչել դերանունները եւ ասել, թէ դրանք ի՞նչ բառերի փոխարէն են դործածուել, զանազանել յատկացուցիչը խնդիրներից եւ ցոյց տալ, թէ ո՞ր բառերին են դրանք վերաբերում, այսինքն՝ գտնել յատկացեալները եւ: Ինչպէս նկատում ենք սովորողները պէտք է գտնեն ու ցոյց տան սովորած խօսքի մասերն ու նախադասութեան անդամները, պատճառաբանեն եւ բացատրեն դրանց դերն ու պաշտօնը: Սեբաս-

* * *

տացին վերլուծութեան համար, որպէս նմոյշ, իր դասագրքում գրել է 10 նախադասութիւններ. մէկ առ մէկ վերլուծութեան է ենթարկել: Այդ ցուցումներում ուշադրաւն աչն է, որ հեղինակը ձգտում է նիւթը, որքան կարելի է, սովորողներին համար դարձնել հեշտընկալ ու դիւրամարս: Ինչպէս ցոյց են տալիս այդ օրինակները, Սեբաստացին կարեւոր տեղ է յատկացնում քերականական վերլուծութիւններին. իւրաքանչիւր գլուխ աւարտելուց յետոյ առաջարկում է կատարել անցած նիւթի կրկնողութիւն եւ ամփոփում: Դասական դրականութիւնից քաղուած նմոյշների հիման վրայ տալիս է շարադրելու, խօսք կառուցելու կարգը. վերլուծութեան է ենթարկում դրանք, ասլա դնում է առանձին նմոյշներ: Ուշադրութեան արժանի է նաեւ այն, որ Արդութեան արժանի է հարց ու պատասխանի առաջարկ յօրինել է հարց ու պատասխանի առանձին գլուխներ եւ դրանք վերնանի առանձին առաջնոյ մասին քերել է «Յաւելումն առաջնոյ մասին քերականութեան»: Քերականը առաջադրում է հարցեր, որոնց պէտք է պատասխանեն սովորողները:

Բերած փաստերը ցոյց են տալիս, որ Սեբաստացին սովորողներին ինքնուրոյն աշխատանքներին կարեւոր նշանակութիւն աշխատանքներին կարեւոր նշանակութիւն աշխատել կ'իւրացուի, ուստի աշխատել է հեշտացնել նրա ուսուցման եղանակը: Նշել է իւրացման միջոցները: Եղբակներն ցուցնեն այն է, որ Սեբաստացին իրեն դրսեւորել է նաեւ որպէս հմուտ ու գիտակ մանկավարժ:

Յաւել, Հայոց լեզուի դասաւանդման կերպի պատմութիւնը առ այսօր դեռ չի գրուած. այդ ուղղութեամբ բաւական հետաքրքիր եւ առատ նիւթ կայ մեր բազմահարուստ մատենադրութեան մէջ եւ սպասում է իր ուսումնասիրող մշակներին: Յուսանք, որ մի օր կը կարդանք իրենց լեզուի դասաւանդման կերպի Հայոց լեզուի դասաւանդման կերպի պատմութիւնը, որտեղ պատշաճ տեղ տրուած կը լինի եւ մեր քանքարաւոր մանկավարժին՝ Սեբաստացուն:

Սեբաստացին լաւ է ուսումնասիրել մեր լեզուի զարգացման օրինաչափութիւնները: Իր կատարելագործման ընթացքում՝ լեզուն բեռնաթափուում է առանձին, մտքեր արտայայտելու համար ոչ էական նշանակութիւն ունեցող աւելորդութիւններին, որոնք խճողում են մտքերը, ձրգձրգում եւ խօսքը դարձնում են ճապաղ, ուստի եւ խլում են աւելորդ ոյժ ու ժամանակ: Ընդհակառակը, ազատուելով աւելորդութիւններից, խօսքը դառնում է կուռ ու սլացիկ, աւելի ազդեցիկ ու լաւ արտայայտիչ եւ խնայում է ժամանակը: Այս միտքն ապացուցելու համար քերականը բերում է յարաբերականներով կապակցուած մի նախադասութիւն, ապա նոյնը տալիս է առանց յարաբերականների եւ այդ հակադրութեամբ էլ ցոյց է տալիս, թէ որքան է երկարում ու ճատաղում խօսքը՝ կորցնելով իր գեղեցկութիւնն ու ճկունութիւնը: Դնում ենք հեղինակի երկու նախադասութիւնները:

1. «Մինչ Գրիստոս, որում հետեւողք ասեմք մեք ոչ փափկութեան մարմնոյ, այլ չարչարանաց՝ եւ խաչի եղեւ սիրող, զիա՞րդ ուրեմն մեք զփափկութիւն մարմնոյ, զոր նա խոտեաց՝ նախադասել կանոնից մեք չարչարանաց՝ եւ խաչի զորս նա ընդգրկեաց»: Ահա ի բանի յայմիկ՝ ռուսն է տրական եւ յարաբերէ զԳրիստոս առ ի լինիլ խնդիր ընդունելութեանս՝ հետեւող: Եւ առաջին զորն է հայցական եւ յարաբերէ զփափկութիւն առ ի լինիլ խնդիր բայիս խոտեաց: Եւ երկրորդ զորն յարաբերէ զչարչարանս, եւ զխաչն յողնականապէս՝ առ ի լինիլ խնդիր բայիս ընդգրկեաց»⁹¹:

Մէջբերելով այս նախադասութիւնը՝ քերականը գտնում է, որ եթէ այս նախադասութեան յարաբերականները հանենք, չգործածենք եւ նոյն միտքը արտայայտելու համար դրանց փոխարէն այլ բառեր դործածենք, երկրորդ զէպքում

91. Մ. ՍԵԲԱՍՏԱՅՈՒ, նոյն տեղում, էջ 380:

